Ածանցները լինում են՝ նախածանցներ և վերջածանցներ:

Բառի սկզբից դրվող ածանցները նախածանցներ են: Առավել գործածվող նախածանցներն են՝

**ան**-անտուն, անգույն
**ապ**— ապերախտ, ապօրինի
**դժ**-դժբախտ, դժգոհ
**մակ**-մակերես, մականուն
**չ**-չխոսկան, չտես
**ստոր**-ստորադաս, ստորագրել
**հակ**-հակազդել, հակահարված
**տ**-տգետ, տգեղ

Բառի վերջից ավելացող ածանցները վերջածանցներ են: Առավել գործածվող վերջածանցներն են՝

- **-ակ, -իկ,-ուկ** վերջածանցներ, օրինակ՝ *տնակ, փոքրիկ, գառնուկ,*
- **-ային, -ական,** վերջածանցներ, օրինակ՝ *քաղաքային, գյուղական,*
- **-ավուն, -եղ, -ի, -(կ) ոտ** վերջածանցներ, օրինակ՝ *դառնավուն, համեղ, աղի, վախկոտ, քրդոտ*
- **-անոց, -արան, -ոց, -ստան, -ուտ** վերջածանցներ, օրինակ՝ *ծաղկանոց, լոգարան, դպրոց, մրգաստան, թփուտ,*
- **-անք, -մունք, -ություն, -ույք, -ուստ** վերջածանցներ, օրինակ՝ *աշխատանք,, մտածմունք, պարծություն, համույք, փախուստ,*
- **բար, պես, որեն-** վերջածանցներ, օրինակ՝ հերոսաբար, մեծապես, մեղմորեն

**Առաջադրանքներ՝**

**1.Տրված բառերը դարձրու ածանցավոր՝** ձյուն, հեքիաթ, թիվ, բժիշկ:

Ձյուն-անձյուն
Հեքիաթ-հեքիաթային
Բժիշկ-բժշկություն

**2.Մեկ բառով գրիր.**

Քար ունեցող-քարոտ
Կեղտ ունեցող-կեղտոտ
Մուր ունեցող-մրոտ
Յուղ ունեցող-յուղոտ
Ժանգ ունեցող-ժանգոտ
Փուշ ունեցող-փշոտ
Ցեխ ունեցող-ցեխոտ

3.Հետևյալ վերջածանցներով կազմիր նոր բառեր, յուրաքանչյուր ածանցով երեքական բառ:

երեքական
հնգական
մեկական

դասարան
ուսումնարան
վառարան

թևավոր
բանավոր
կեխծավոր

հիվանդանոց
ամառանոց
խոհանոց

բադիկ
բալիկ
կատվիկ

տնակ
պահակ
կայծակ

4.Հետևյալ նախածանցներով կազմիր նոր բառեր:

ան-անտուն, անօգնական
Վեր-վերնատուն, վերնախաբ
գեր-գերագույն, գերաճ
ընդ-ընդհանուր, ընդարձակ

## Ածանց և վերջավորություն

Բառերի կազմությունն ուսումնասիրելիս շատ կարևոր է ածանցները տարբերել վերջավորությունից:

Ածանցները, բառին ավելանալով, փոխում են բառի ձևը և իմաստը. Օրինակ՝ սենյակ-սենյակ**ային**, քար-քար**ոտ**, լույս-լուս**ավոր**

Վերջավորությունները, ավելանալով բառին, փոխում են բառի ձևը, բայց իմաստը մնում է նույնը, օրինակ՝ սենյակ-սենյակ**ում**, քար- քար**եր**, լույս-լույս**ից**